

5681

ՀՍԽՀ ՄԵՏԱԿԱՆ ՈՊԵՐԱ

ԼԵՐԵՏՏԱ # 3

ՅԵՎ ԳԵՆԻՅ

ՈՆԵԳԻՆ

Ռեգրա յերի գործադրչամբ յեվ
յոք պահեքով

ԼԻՐԻՔԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ներածություն

ՉԱՅԿՈՎՍԿՈՒ

Բոս

ՊՈՒՇԿԻՆԻ

Սեպտեմբեր 1934 թ. համարում յեվ համառոտ բովանդակություն՝ ՌՈՒՐԵՆ ՅԵՐԼԵՄԵՉՅԱՆԻ

785
0.57

ՄԵՐԵՎԱՆ 1934

ՊՅՈՏՐ ԻԼԻՉ ՉԱՅԿՈՎՍԿԻ

(1840—1893)

Պյոտր Ելիչ Չայկովսկին ծնվել է 1840 թվի մայիսի 7-ին ՎՈՏԿԻՆՍԿՈՒՄ (վրատկալի նահանգ)։ Նրա հայրը պետական պաշտոնյա չէր։ Գիմնազիան ավարտելուց հետո, Չայկովսկին իր հոր սպառնալիքներին ներքո, մտնում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։ Սակայն սպառա ականավոր կոմպոզիտորը չափազանց քիչ էր հետաքրքրվում այս մասնագիտությամբ։ Այդ ժամանակամիջոցում նա յերաժշտության թեորիայի դասեր է վերցնում, ցույց տալով չերաժշտական փայլուն ընդունակություններ։ Վերջացնելով համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, Չայկովսկին մի առ ժամանակ աշխատում է արդարադատության նախարարության մեջ։

1862 թվին Նիդոլայով Անսոն Խուրիեցեցին լեզբայրները Պետերբուրգում և Մոսկվայում բաց են անում կոնսերվատորիաներ։ Նույն այդ թվին Չայկովսկին մտնում է Պետերբուրգի կոնսերվատորիան՝ կոնսերվատորիան ընդունվելուց հետո, Չայկովսկին մի շատ ուշադրով նամակ է գրում իր քրոջը։ ԵՑԻՍ ԲՆԳՈՒՆՎԵՑԻ

02.09.2013

788
0-57 *uy*

2856 ¹⁰⁰⁶/₂₈₃₉₃



ՉԱՅԿՈՎՍԿԻ

Գեորգիտի տպարան, Յերեվան
Դավլիտ 65, պատվեր 202, տիրոժ՝ 2000

ճոր բացված կոնսերվատորիան. մի քանի արից ճեռն դա-
սերն սկսվելու յեն: Իոչպես քեզ հայտնի յե, արիներ ա-
ռաչ յես սկսեցի գրադվել յերաժեսուրյան տեսութամբ:
Վորոշել եմ պատշաճն քողնել (խոսքը պետական ծա-
ռայութեան մասին ե Ռ. Թ.): Յես հավանություն
չունեմ խոսուր կոմպոզիտոր դառնալու, յես միայն ցան-
կանում եմ կատարել այն, ինչ վոր իմ ներքին ձայնն ե
քելադրում: Ինքն կլինեմ խոսուր կոմպոզիտոր, քե խեղճ
ուսուցիչ, այդ միտվելույն ե. համենայն դեպս խիզմս կլի-
նի հանգիստ: Յես չեմ ուզում դատավոր լինել, մարդկանց
իրավունքները պատշաճանել կամ մեղադրել, վորից փոչինչ
չեմ հասկանում:

Պետերբուրգի կոնսերվատորիան ավարտելուց հետո,
Չայկովսկին հրավիրվում ե Մոսկվայի կոնսերվատորիան
իբրև յերաժշտութեան թեորիայի դասախոս: Չայկովս-
կին վախճանվեց 1893 թվի հոկտեմբերի 25-ին (նո-
յեմբերի 6-ին) խոլերայով:

Անցյալ դարի 70-ական թվականներին ցարական
Ռուսաստանում տեղի ունեցող սոցիալական-քաղաքա-
կան խոշոր տեղաշարժերը հայտնի յեն իբրև նարդո-
նիկական շարժումներ:

Այդ շրջանի շարժումներն անդրադառնում են ինչ-
պես հրապարակախոսութեան, այնպես ել գրականու-
թեան ե յերաժշտական արվեստի մեջ:

Այս մտորումները իր յերաժշտութեան մեջ, իր
ինստրումենտալ ե վոկալ յերկերում լավագուրն կերպով

գրեմատիկայի Մոդես Մուսորգսկին (1835—1881). նրան
հուզող գաղափարները, վորոնք ուղղութեան տվին
արվեստագետի ստեղծագործութեանն յերին, հանդիսա-
նում են մանր բուրժուական հեղափոխական իդեալ-
ների արտացոլումը, իսկ այդ շարժումը մեզ արդեն
ժանոթ ե իբրև նարդոնիկական շարժում: Մուսորգ-
սկին այդ հոսանքին հարեց բավական ռադիկալ կեր-
պով: Նա իր յերկերում լայն չափով շոշափեց գյուղա-
ցու կենցաղը ե այդ կյանքի մեջ նա տեսնում եր վոչ
թե տոնական, վոչ թե արտաքին կողմը, ինչպես ալդ
անում եր Ռիխտկի Կոստակովը, այլ այդ կենցաղի մեջ
Մուսորգսկին փնտռում եր իսկական կյանքը, իսկ այդ
կյանքը ծանր եր ե դաժան:

Այս իրականութեան ճիշտ ներտադրումը Մուսորգ-
սկուց պահանջում եր մի տառանձին ստեղծագործական
մեթոդ. այդ մեթոդը ռեալիստական մեթոդն եր: Իսկ
Մուսորգսկու դործադրած ստեղծագործական մեթոդը
վոչ միայն լուրջ ուսումնասիրութեան պետք ե յենթարկ-
վել մեր կողմից, այլև այդ մեթոդը կարող ե շատ խըն-
դիրներում ոգնութեան հասնել մեզ:

Ընդգծելով այս, միաժամանակ պետք ե նշել, վոր
Մուսորգսկու ամբողջ ստեղծագործութեանը մեզ համար
ընդունելի չեն կարող լինել: Արվեստագետի կյանքի
վերջալույսին, յերբ ժանդարմական ռեժիմի վայրագ
հարվածներից նարդոնիկական ռադիկալ տրամադրու-
թեանն յերի ալիքը վայրեջք ապրեց, Մուսորգսկին հո-

սետեսութեան մեջ ընկալի: Նա հիասթափվեց: Նր վերջին շրջանի յերկերի մի ամբողջ շարք կրում են այդ կնիքը և նշվում են վորպես նահանջ՝ նախկին դիրքերից: Նա, վոր մի ժամանակ կրանում եր ականավոր հրապարակախոսներ Չերնիբեվսկու և Հերցենի աշխատութեանները, հետզհետե լքեց իր դիրքը և այլև չկարողացավ տեղի ունեցող քաղաքական խմբումները դիտել պայծառ լուսարձակով:

Չայկովսկին Մուսորգուի հակապատկերն է: Նրանց աշխարհայացքի և ստեղծագործական մեթոդի մեջև մեծ անդունդ դուրսէջուն ու՛ի: Չնայած, վոր ռուս ականավոր յերկու կոմպոզիտորների ստեղծագործական շրջանը անջրպետ չունի և մասամբ զուգադիպում է նույն ժամանակաշրջանին, բայց նրանք իբրև ստեղծագործներ տարբեր բնավորութեաններ են:

Իյուզացիական ճնշված և հարստահարված մասսաների վիշտն յերգող Մուսորգուին հակադրվեց ազնւրվական դասակարգի մտավորականութեան իդճիքի ու մտորումների արտահայտիչ Չայկովսկին: Այդ դասակարգի գաղափարախոսութեանը Չայկովսկու ստեղծագործութեանների մեջ ընդգծված է ուժեղ և խտացած դո. ցնորով:

60—70-ական թվականներին ռուս ազնւականութեանը կամաց-կամաց զիջում է իր քաղաքական ու տնտեսական դիրքերը՝ տեղ տալով յերիտասարդ բուրժուազիային: Դրավելով ազնւական դասակարգի բազ-

մապիսի դիրքերը՝ նոր բուրժուազիան առաջադրում եր իր իգեաները: Մի կողմից պատմութեան թատերաբեմից հեռացող ազնւական դասակարգի և մյուս կողմից տնտեսական ու քաղաքական նոր դիրքեր գրավող յերիտասարդ բուրժուազիայի բուռն հակամարտութեան մեջ, առաջինն յերգում եր կարապի իր վերջին յիրգր: Այդ պայքարում նրա ճիչը լսվում եր խեղդված ու մահամերձ: Պատմութեան յերկաթե որենքները նրան մահվան ելին դատապարտել:

Չայկովսկին, իբրև խոշոր արվեստագետ, իբրև ռուս ազնւական մտավորականութեան գաղափարախոսը, իր ստեղծագործութեաններին մեջ հանճարեղ կերպով հընչեցրեց այդ ճիչը: Յերաժշտական պատկերների և հնչյունների միջոցով, նա արտահայտեց հոռետեսութեան և հոգեբանական վորքերգութեան: Չայկովսկին խորապես զգաց իր դասակարգի անխուսափելի մահը, զգաց ներքուստ, զգաց մեծ հավատքով և այդ բուրբը հնչեցրեց խոշոր վարպետութեամբ: Այդ հավատքն ի վերջո պսակվեց հանճարեղ Շ-րդ սիմֆոնիայի հարուստ թեմաներով:

Չայկովսկու յերաժշտական ժառանգութեանը մեղ համար պատմական մեծ նշանակութեան ունի: Նա բրժեքավոր է, տեսակարար խոշոր կշիռ է նմ ըկայացուում կերտելու իր վարպետութեամբ, վորպես մեծ, լայն կտափների ստեղծագործողի: Գլխավորապես սիմֆոնիական գրականութեան մեջ, նա մեծագույն ճարտարա-

պետն ե, խոշորագուշն վարպետը, վոր իր վերջին յերեք սիմֆոնիաներով կարող ե Բեքհովենի կողքին նըստել հավասար և ազատ իրավունքով:

19-րդ դարի խոշորագուշն կոմպոզիտորներից մեկի՝ Պյոտր իլիչ Չայկովսկու յերաժշտական, ստեղծագործական անցած ուղին, կտրած հարուստ ճանապարհն սրկավում ե լիրիքական իդեալիզմից («Ունեպիե») մինչև դրամատիքական ոռոմանտիզմը («Պիկովայա դամա», 6-րդ սիմֆոնիա):

Չայկովսկու ստեղծագործական մտքի աշխատանքները սկսվում են 17 տարեկանից: Յեթե յերաժշտական քննադատությունը և առանձնապես Անտոն Ռուբինսթեյնն այդ շրջանի նրա յերկերը շատ արժեքավոր չի համարում, ապա համենայն դեպս նրանք հետաքրքիր են իբրև նոր մտքի վորոնումներ և վորոնք սկիզբ են հանդիսանում այն խոշոր և պատմական յերաժշտական հնչյունի, վոր Չայկովսկին պիտի հնչեցներ 80-ական թվականներին և հատկապես իր կյանքի վերջալույսին:

Չայկովսկու յերաժշտական ժառանգության վրանկատելի յե արեմտյան յերաժշտական կուլտուրայի ազդեցությունը: Առանձնապես աչքի յե ընկնում գերմանական ոռոմանտիկ յերաժշտական դպրոցի ներկայացուցիչներ՝ Շուբերթի, Շումանի և Փրանսական ոպերային արվեստի դեմքեր Մեյերբերի, Գունոյի և Բիզեյի ազդեցությունը: Սակայն այդ բոլոր ազդեցությունները Չայկովսկու վեհալ և ինստրումենտալ յերկերի մեջ չի

դրսևորվում մեխանիկորեն. նրա ստեղծագործական պրոցեսը բավական խստապահանջ քննադատություն ե առաջ բերում դեպի յուրաքանչյուր յիրաժշտական յերկ. իսկ քննադատական այդպիսի վերաբերմունքավելի քան արժեքավորում ե հեղինակի ստեղծագործական դեմքը:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

- ԼԱՐԻՆԱ — Մեցցոսոպրանո
- ՖԻԼԻՊՅԵՎՆԱ — Մեցցոսոպրանո
- ՏԱՏՅԱՆԱ — Սոպրանո
- ՈՅԼԿԱ — Ալտ
- ՈՆԵԳԻՆ — Բարիտոն
- ԼԵՆՍԿԻ — Տենոր
- ԳՐԵՄԻՆ — Բարիտոն կամ բաս
- ՏՐԻԿԵ — Տենոր
- ՉԱՐԵՑԿԻ — Բաս

Գործողութեան վայրը Ռուսաստանում՝ 1815 թվին

«ՈՆԵԳԻՆ»

լիբրետոյի և Պասկերներ

(ուսկրա յերեք գործողութեամբ և յոթ պատկերով)

«Ոնեգին» ոպերայի (օր. 24) նախնական աշխատանքները Չայկովսկին սկսեց 1877 թ.։ «Ոնեգին» յերաժշտական ձևավորման մասին դեռևս 1877 թվից շատ առաջ, նա խոսել էր Մոսկվայի կոնսերվատորիայի ռեկտոր Նիկոլայ Ռուբինսեսկիի հետ։ Չայկովսկին «Ոնեգին» ոպերան գրեց յերեք ամսվա ընթացքում։ Ոպերայի հիմնական աշխատանքները նա կատարեց Բոստոնում, թեև Մոսկվայում և Պետերբուրգում չեղած կարճ ժամանակամիջոցում, Չայկովսկին վերոհիշյալ չերկը վերամշակութեան էր չենթարկում։

1877 թ. հոկտեմբերի 20-ի «Ոնեգին» ոպերայի աշխատանքների մասին Չայկովսկին Նիկոլայ Ռուբինսեսկիին հասցեագրված նամակում հետևյալն է գրում։

«Յնս վերջացրի «Ոնեգին» առաջին գործողութեան ինստրումենտովկան (առաջին գործողութեանը 3 պատկեր ունի Ռ.Ռ.) հնարավոր չէ՞ արդյոք ցուցադրել առաջին գործողութեանը և 2-րդ գործողութեան 1-ին

պատկերը» (Մ․ Чайковский․ «Жизнь Петра Ильича Чайковского», том II, ст․ 33):

Թերևս վոչ մի ոպերային յերկ, յերաժշտական կա-
սուցվածքի և բեմադրության տեսակետից այնքան չի
մատանջիլ Չայկովսկուն, վորքան «Ոնեգինը»: Վոչ
միայն այս, այլ անգամ դերերի ճիշտ բաշխումը նա
նույնպես համարում էր խոշոր խնդիր և ոպերայի հա-
ջողության կամ անհաջողության հարցը կապում էր
դերերի ճիշտ բաշխման և ճիշտ բաշխման հետ: Չայ-
կովսկին առանձնապես մտահոգված էր Տախտանայի,
Ոլգայի, յեվ Լենսկու դերերի բաշխումով:

«Ոնեգին» ոպերայի մշտական հաջողության մասին
չափազանց կասկածամիտ էր ամենից առաջ ինքը, հե-
ղինակը: Այս մասին նա բազմիցս իր նամակներում
շեշտում է: Բերենք այդ նամակներից մի քանիսը:
Նրանցից մեկը Չայկովսկին ուղղել է Դանիլյեվին (1878 թ.
հունվարի 2-ին):

«Ոնեգին» ոպերան վոչ մի ժամանակ չի կարող
լրիվ հաջողութուն գտնել: Դուք միանգամայն ճիշտ
էք, յերբ ասում էք, թե իմ ոպերան բեմական չէ»:
(Մ․ Чайковский, «Жизнь Петра Ильича Чайковского»,
том II, ст․ 79 — 80):

Փոն-Մեկկելին գրած նամակում Չայկովսկին նշում
է, վոր Տախտանայ յեվ Լենսկին իրեն փակուղու առաջ
են գրել: Չայկովսկու այդ ճաչտարարությունը վերա-
բերում է Տախտանային յեվ Լենսկուն, իբրև յերաժշտա-
կան տիպերի:

Մի այլ նամակում նա գրում է.

«Հիմա տեսնում եմ, վոր իսկական ոպերա,
«Ոնեգինը» դուրս չի դա: Մակայն չեմ կարող
չգրել, վորովհետև շատ բաներ (յերաժշտական
մտածումներ և պատկերներ Ռ․ Թ․) գլխումս ար-
դեն պատրաստ են»:
(Н․ Кашкин «Воспоминания
о Чайковском», ст․ 107 — 109):

Կարլ Ալբերտին գրած նամակից (1877 թ. դեկտ-
3, Վեննետիկ) հետևյալն լինք իմանում.

«Ոնեգին» համար հարկավոր են 1) միջակ
յերգիչներ, սակայն լավ դպրոց անցած. 2) յեր-
գիչներ, վորոնք միաժամանակ խաղան պարզ և
լավ. 3) բեմադրությունը պետք է լինի վոչ շքեղ,
բայց համապատասխան իր ժամանակին. 4) կոս-
տյունները պետք է լինեն այն դարի, վոր ժամա-
նակում կատարվում է գործողությունը. 5) Կա-
պելմայստերը (խոսքը դիրիժորի մասին է Ռ․ Թ․)
չպետք է լինի մեքենա, վորպեսզի որկեստրը
Cis-ի փոխարեն C չնվագի, այլ նա պետք է լինի
իսկական ղեկավար» (Մ․ Чайковский, «Жизнь
Петра Ильича», том II, ст․ 58):

Յեվ այս պատճառով էլ, ահա, Չայկովսկու ցանկու-
թյունն էր, վոր «Ոնեգինը» բեմադրվեր Մոսկվայի
կոնսերվատորիայի յերաժշտական ուժերով, նա վախե-
նում էր ընդհանրապես մեծ ոպերանրի դերասաննե-
րից և գեղարվեստական կազմից: Պետք է ասել, վոր

հեղինակը, ինքը յերբեք ել մտազրություն չի ունեցել իր այլ յերկը մեծ բեմերում խոշոր արվեստագետների միջոցով բեմադրելու:

Այդպես ել յեղավ: «Ոճեգիներ» առաջին բեմադրությունը տեղի ունեցավ 1879 թ. մայիսի 17-ին Մոսկվայի փոքր թատրոնում կոնսերվատորիայի յերաժշտական լավագույն ուժերի մասնակցութեամբ: Իսկ մեծ թատրոնում, այս անգամ ուրդեն վոչ կոնսերվատորիայի յերաժշտական ուժերով, առաջին բեմադրությունը կատարվեց 1881 թ. հունվարի 23-ին (Պետերբուրգի մեծ թատրոնում):

«Ոճեգիներ» Չայկովսկու գրած 10 ուղերաների մեջ հանդիսանում է յիրիքական արվեստի լավագույն նըմուշը: Վերջան «Պիկովայա դասան» խոսացած է դրա մատիքական գույներով, դրա հակառակ «Ոճեգիներ» պատկանում է յիրիքական արվեստին: Ոպերային արվեստի մարդում Չայկովսկու «Ոճեգիներ» ավելի ժողովրդականուի յուն զտավ, քան նույն հեղինակի մյուս ուղերաները: Չայկովսկու կասկածամտությունը յիրիքական այս պատկերների հաջողութեան մասին բեմադրական արվեստի տեսակետից մասամբ ճիշտ է. իսկ յերաժշտութեան մասին չեղած նրա վախը այսօր արդեն կասկած չի կարող հարուցանել: Յերաժշտական արվեստի տեսակետից «Ոճեգիներ» պիտի ընդունել հաջողված, թեև կան դեմքեր և տիպեր, վորոնց վերաբերմամբ յերաժշտական տեսակետից հեղինակը յեղել է բավական ժլատ:

Յերաժշտականորեն յրիվ և հաջողված տիպեր պիտի համարել Տասիանան, Լեոնիին յեվ Ոճեգիներ: Մնացյալ տիպերը չի կարելի ամբողջական համարել: Հատկապես թերի յե Ոլգայի յերաժշտական դեմքը: Հեղինակը յերաժշտական համակրանք չունի դեպի Ոլգան, իսկ սա ոպերայում արտահայտվել է բացասաբար: Բացի արժեքավոր մեներգներից (Solo), կան հետաքրքիր և զեղարվեստականորեն ամբողջացած դուետներ, կվարտետներ, և խմբերգներ. այս հանգամանքը գալիս է իր հերթին վորակավորելու յերաժշտական այլ մեծ կտավը: Վոկալից բացի «Ոճեգիներում» արժեքավոր է ինստրումենտալ մասը. վոկալ և ինստրումենտալ արվեստների միասնությունը որդանական է, ներդաշնակ և ամբողջական: «Ոճեգիներ» ինստրումենտալ մասերում, նրկատելի յե նույն հեղինակի այլ ինստրումենտալ յերկերի ազդեցությունը, թեև այդ բոլորը գունատ և մշուշտ, հազիվ հիշեցնող մոմենտներով է արտահայտված:

1006
98393

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաջին պատկեր

Տանտիրուհի Լարինան մայրը և յերկու աղջիկներին, վորոնցից Ոլլգան սիրահարված է հարևան Լենսկու վրա: Յերկու քույրերը Տատյանան և Ոլլգան միասին չերգում են: Այգ հին յերգի հնչյունների տակ Լարինան և դայակը վերհիշում են յերջանիկ անցյալը: Ամառային հունձք կատարելուց հետո, վերադառնում են գյուղացի կանայք և տղամարդիկ, վորոնք ուրախ չերգում են ու պարում: Ոլլգան ուրախ է, աշխուժ, թրվուուն, նրան բոլորն անվանում են «յերեխա»։ Տատյանան մըտածկոտ է, չերագոդ:

Լարինայի տուն են գալիս Լենսկին և նրա ընկեր Ոնեգին: Չորսը միասին չերգում են. Տատյանային առաջին իսկ հայացքից թվում է, վոր Ոնեգինն այն մարդն է, վորին պիտի նվիրի իր սիրտը: Լարինայի տան պարտեզում, գեղեցիկ բնության մեջ Լենսկին չերգում է իր սիրո մասին, իսկ Ոնեգինն չերազկոտ Տատյանային պատմում է գյուղի տաղտուկ կյանքի մասին:

Յերկուրդ պատկեր

Գիշեր է. Տատյանան դայակի հետ միասին է, վերջինս սենյակից հեռանում է բարի գիշեր ասելով Տատյանային: Տատյանան մինչև լուսը արթուն, անց է կացնում ծանր և դժնդակ գիշեր: Նա սիրահարված է Ոնեգինի վրա: Յերկար տառապանքներից ու մտածումներից հետո, նա նամակ է գրում Ոնեգինին, բացարձեղով իր սերը: Նա կարծում է թե այս քայլը իր համար կլինի նոր կյանքի սկիզբը:

Յերկուրդ պատկեր

Տատյանան պարտեզում սպասում է Ոնեգինին. նա գալիս է. սակայն նրա սառ խոսքերը խորապես անդրադառնում է Տատիանայի վրա: Ոնեգին հայտնում է, վոր իր սերը կարող է միայն յեղբայրական լինել: Այսպիսով Տատյանայի յերագը փշրվում է:

ՅԵՐԿՐՈՂԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաջին պատկեր

Տատյանայի տոնի առթիվ Լարինայի տանը պարահանդես է: Բազմաթիվ հյուրերի հետ այնտեղ են նաև Լենսկին և Ոնեգինը: Ոնեգինը ձանձրույթից սկսում է Ոլլգային հետևել: Ոնեգին Ոլլգային առաջարկում է իր հետ պարել: Խանդի հողի վրա Լենսկու և Ոնեգինի, այդ յերկու ընկերների մեջև կռիվ է սկսվում: Լենս-

կին ըստ ի ներկայութեանը հայտարարում ե, վոր Ս-
նեզինը այլևս իր բնկերը չի: Լեւոնին դուել ե պա-
հանջում, Սնեզին նրա առաջարկն ընդունում ե:

Յերկրորդ պատկեր

Զմեռային մի ցուրտ առափոս, Լեւոնին և իր սեկուն-
տանդ Ջարեգիին սպասում են իրենց հակառակորդին:
Լեւոնին չերգում ե իր նշանափոր արիան իր ձակա-
տազրի մասին: Գալիս ե Սնեզինը: Իռեւը վերջանում
ե Լեւոնի սպանութեամբ:

ՅԵՐԲՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաջին պատկեր

Պարանոցիս Պետերբուրգում հարուստ Սանովնիկի
տանը: Գորնեզի և եկոսեզի տակ պարում են: Մի քա-
նի տարվա ճամբորդութունից հետո Սնեզին այս
պարահանդեսում հանդիպում ե իր բնկերոջ Իշխան
Գրեմինին, վորն ամուսնացել ե Տառլանայի հետ: Իր-
բեմին չերգում ե իր սիրո մասին: Տեսնելով Տառլա-
նային, Սնեզինը սիրահարվում ե նրա վրա:

Յերկրորդ պատկեր

Սնեզինը Տառլանային պատմում ե իր սիրո մա-
ին: Սակայն արդեն այս եր Տառլանան ասում ե, վոր
իր սերը միայն իր սիրունիկինն է: Սնեզինը հրաժեշտ աս-
լով Սնեզինին:

